Հավելված N 1
«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնանշման հարցման մասնակցելու

«ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից **«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2»** ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 08256045
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ Arevik.mkhitaryan@assistance.am
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար 35/1
- հեռախոսահամարն է՝ 095 55 60 03

Սույնով «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են **«ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2»** ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում,

2) «**ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԾՁԲ-24/1-ԱՊՊԱ-2»** ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ http://surl.li/rwzge:

«ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ
Տնօրեն

Արևիկ Մխիթարյան
25 մարտի, 2024թ.

MKHITARYAN AREVIK 6110870382

Digitally signed by MKHITARYAN AREVIK 6110870382
Date: 2024.03.25 10:43:00 +04'00'

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԳՊ 23-0042

Ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնելու մասին

ք. Երևան **«09» նոյեմբերի 2023թ.**

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ), ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արման Դաղունցի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից և «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ԳՈՐԾԱԿԱԼ), ի դեմս տնօրեն Արևիկ Մխիթարյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով ԳՈՐԾԱԿԱԼԸ պարտավորվում է վարձատրությամբ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հանձնարարությամբ, նրա անունից և հաշվին իրականացնել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ապահովագրական միջնորդային (ապահովագրական գործակալի) գործունեություն՝ համաձայն Պայմանագրի 1.2 կետի:

1.2 ԳՈՐԾԱԿԱԼԸ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից իրականացնում է ապահովագրական միջնորդային (ապահովագրական գործակալի) գործունեության հետևյալ տեսակները, այսուհետ՝ «Գործառնություններ».

1.2.1 ապահովագրական պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում նաև ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից մատուցվող ապահովագրական ծառայությունների մասին ապահովագրական խորհրդատվության իրականացում,

1.2.2 Ապահովադիրների ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հետ ապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում,

1.2.3 ապահովագրության պայմանագրերի (Վկայագրերի) կնքում,

1.2.4 ապահովագրական պայմանագրի կատարման օժանդակում, ներառյալ ապահովագրավճարների հավաքման իրականացում կամ վերահսկում:

1.3 ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից Պայմանագրի 1.1 կետով սահմանված ապահովագրական գործառույթների իրականացման արդյունքում կնքած գործարքներով իրավունքներ և պարտականություններ անմիջականորեն ձեռք է բերում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ:

1.4 Պայմանագրով ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից Գործառնությունների իրականացման ընթացում մասնագիտական անփութության հետևանքով ապահովադիրներին, ապահովագրված անձանց և շահառուներին պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը Պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր օրացուցային տարվա համար ստանձնում է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ընդհանուր՝ մինչև 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով:

1.5 Պայմանագրով մասնագիտական անփութություն է համարվում ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից Պայմանագրի 1.1 կետով սահմանված գործառնությունների իրականացման ժամանակ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված Գործակալի պարտականություններից, Ապահովագրողի ապահովագրության կանոններից (պայմաններից) կամ սակագներից ցանկացած շեղում:

1.6 ԳՈՐԾԱԿԱԼՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից սույն Պայմանագրի 1.2 կետով կետով նախատեսված ապահովագրական միջնորդային գործունեությունը իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ապահովագրության հետևյալ դասերի գծով՝

1.6.1 Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ),

1.6.2 առողջության ապահովագրություն՝

1.6.3 Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)

1.6.4 Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,

1.6.5 Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,

1.6.6 Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,

1.6.7 Աջակցության ապահովագրություն, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:

1.7 Ապահովագրության յուրաքանչյուր տեսակի համար ապահովագրության կանոնները (պայմանները) զետեղված են ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ www.armeniainsurance.am պաշտոնական կայքում:

2 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ապահովագրական միջնորդային գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում, իսկ Կողմերի իրավունքները և պարտականությունները որոշվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 42-րդ գլխով նախատեսված կանոններով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, Ապահովագրական Գործակալի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով:

2.2 **ԳՈՐԾԱԿԱԼԸ պարտավորվում է՝**

2.2.1 Պայմանագրի պայմաններին համապատասխան և պատշաճ կարգով կատարել պայմանագրի 1.2 կետով սահմանված գործառնությունները՝ պահպանելով գործառնությունների իրականացման ընթացակարգի կանոնները,

2.2.2 Ապահովագրողին ապահովել ապահովագրական պայմանագրերի թողարկման համար անհրաժեշտ տեղեկատվությամբ,

2.2.3 Նախքան ապահովագրության պայմանագրի կնքումն իրականացնել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջները (102 հոդված)՝ կրելով դրանց չկատարման հետևանքով Կողմերին պատճառված վնասների համար պատասխանատվության ռիսկը՝

2.2.3.1 Ապահովադրին հայտնել իր հասցեն և հեռախոսահամարը.

2.2.3.2 Ապահովադրին հայտնել, որ ինքը գործում է որպես ապահովագրական գործակալ, համապատասխան փաստաթղթերով հաստատել, որ գրանցված է ապահովագրական գործակալների ռեգիստրում, ինչպես նաև տեղեկացնել ռեգիստրում կատարված գրառումներին Ապահովադրի կողմից ստուգելու իրավունքի մասին.

2.2.3.3 Ապահովադրին տեղեկացնել, որ հանդես է գալիս ապահովագրողի անունից.

2.2.3.4 Ապահովադրին ներկայացնել ապահովագրության այն դասերը, որոնց գծով Պայմանագրով Ապահովագրվողը ԳՈՐԾԱԿԱԼԻՆ տվել է ապահովագրական միջնորդություն իրականացնելու լիազորություններ,

2.2.3.5 Ապահովադրին ապահովագրության պայմանագիր կնքելու առաջարկ անել,

2.2.3.6 Ապահովադրին ներկայացնել ապահովագրության պայմանագրի բոլոր պայմանները, մասնավորապես՝ ապահովագրավճարի չափերը, պայմանագրի սահմանափակումները և այլն,

2.2.3.7 Ապահովադրին ներկայացնել ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգն ու պայմանները,

2.2.3.8 իրականացնել ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ պահանջները՝ ներառյալ այն պահանջների, որոնք ուժի մեջ կմտնեն Պայմանագրի գործողության ընթացքում,

2.2.4 իրականացնել ապահովագրության պայմանագրի կնքման օժանդակման գործընթացը՝ համաձայն Պայմանագրի 1.2 կետի,

2.2.5 Հատուցել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պատճառված այն իրական վնասները, որոնք, մասնավորապես, առաջացել են՝

2.2.5.1 ԳՈՐԾԱԿԱԼԻ մասնագիտական անփութության արդյունքում Ապահովադիրներին, Ապահովագրված անձանց և Շահառուներին պատճառված վնասների Ապահովագրողի կողմից հատուցման հետևանքով, ընդ որում միայն այն դեպքում, եթե ակնհայտ է կապը Գործակալի Պայմանագրով իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու և սույն կետում նշված անձանց վնաս պատճառելու միջև.

2.2.5.2 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից Պայմանագրով չպատվիրակված գործառույթների իրականացման հետևանքով,

2.2.5.3 ԳՈՐԾԱԿԱԼԻ որևէ այլ ոչ իրավաչափ գործողության հետևանքով,

2.2.6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ներկայացնել ապահովագրական ԳՈՐԾԱԿԱԼԻ գործառնություններ իրականացնելու իր կողմից հաստատված իրավասու անձանց ցանկը (համաձայն Պայմանագրից կից Հավելված 3-ի), որոնք իրավունք ունեն ԳՈՐԾԱԿԱԼԻ անունից կատարել Պայմանագրի 1.2 կետով սահմանված գործառույթները և համապատասխանաբար ստորագրել ապահովագրության պայմանագրերը: Իրավասու անձանց կազմում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում անմիջապես, գրավոր կարգով, տեղյակ պահել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ:

2.2.7 ընդունել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՑ Պայմանագրով սահմանված գործառնությունները իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը /վկայագրեր, գործակալի գործունեությունը կանոնակարգող կանոններ/,

2.2.8 ապահովել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից իրեն տրամադրված ապահովագրության վկայագրերի և այլ փաստաթղթերի և հավաքագրած ապահովագրավճարների անվտանգությունը՝ պահպանելով դրանք չհրկիզվող պահարանում:

2.2.9 ԳՈՐԾԱԿԱԼԸ պարտավոր է ապահովել իր գործունեության տարածքի տեխնիկական հագեցվածությունը:

2.2.10 Տասը օրվա ընթացքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ հաշվեհամարին փոխանցել կամ կանխիկ կերպով դրամարկղ մուծել ապահովագրության վկայագրերով սահմանված և հաճախորդներից գանձված ապահովագրավճարները:

2.2.11 Պահպանել Պայմանագրի իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած ապահովագրական գաղտնիքը, այն հրապարակել միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում և հիմքերով:

2.2.12 պարտավորվում է իր գործունեության ողջ ընթացքում ղեկավարվել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի (այսուհետ՝ Բյուրո) և ապահովագրական ընկերությունների միջև կնքված պայմանագրով հաստատված «ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործակալների վարքագծի կանոններով» (այսուհետ՝ Կանոններ),

2.2.13 անվերապահ համաձայնություն է տալիս առ այն, որպեսզի Բյուրոն և ապահովագրական ընկերություններն իր հետ կապված հարաբերություններում իրականացնեն Կանոններով նախատեսված լիազորությունները (պարտականությունները), ինչպես նաև այդ լիազորությունների (պարտականությունների) կատարման համար ՀՀ կենտրոնական բանկից ստանան և միմյանց միջև Բյուրոյի սահմանած կարգով փոխանակվեն ու քննարկեն իր վերաբերյալ անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, փաստաթղթեր և նյութեր՝ ներառյալ ապահովագրական գաղտնիք կազմող,

2.2.14 Բյուրոյի կանոններով սահմանված չափանիշներին բավարարելու դեպքում պարտավորվում է ցանկացած այլ ապահովագրական ընկերության կողմից պահանջ ներկայացվելու դեպքում նրա հետ կնքել ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեության իրականացման պայմանագիր,

2.2.15 անվերապահ համաձայնություն է տալիս առ այն, որպեսզի Կանոններով նախատեսված դեպքերում Ապահովագրական ընկերությունը Կանոններով սահմանված ժամկետում միակողմանիորեն դադարեցնի իր հետ կնքված պայմանագիրը՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեության իրականացման մասով,

2.2.16 պարտավորվում է Կանոններով սահմանված կարգով իրեն տուգանելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում Բյուրոյի կողմից համապատասխան պահանջ ներկայացվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Բյուրոյին վճարել համապատասխան տուգանքի գումարը:

2.2.17 հավաստում է, որ ամբողջությամբ ծանոթացել է Կանոններին և համաձայն է գործել դրանցում սահմանված դրույթներին համապատասխան

2.3 **ԳՈՐԾԱԿԱԼՆ իրավունք ունի՝**

2.3.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՑ պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, լրացուցիչ տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են Պայմանագրով նախատեսված գործառնությունները պատշաճ իրականացնելու համար,

2.3.2 Մերժել ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից ներկայացված ապահովագրության վկայագրերը՝ դրանք սահմանված ձևին չհամապատասխանելու կամ պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ ներկայացվելու պատճառաբանությամբ,

2.3.3 Ժամանակին ստանալ Պայմանագրով սահմանված միջնորդավճարի գումարը:

2.4 **ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ իրավունք ունի՝**

2.4.1 ԳՈՐԾԱԿԱԼԻՑ պահանջել Պայմանագրով սահմանված պարտավորությունների պատշաճ կատարում,

2.4.2 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ Պայմանագրով ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից իրականացվող գործառույթների իրագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով իրավունք ունի ԳՈՐԾԱԿԱԼԻ մոտ հերթական եռամսյակային կտրվածքով կամ անհրաժեշտությունից ելնելով արտահերթ՝ անսահմանափակ թվով կատարել ստուգումներ, ուսումնասիրություններ, ինչպես նաև իրավունք ունի գործառույթների իրականացման հետ կապված ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն: Հերթական ստուգում և (կամ) ուսումնասիրության կատարման դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ եռամսյակի ավարտից հետո ոչ ուշ քան մեկամսյա ժամկետում ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ներկայացնում է գրավոր ծանուցում ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնելու մտադրության մասին: Արտահերթ ստուգում և (կամ) ուսումնասիրություն իրականացնելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ներկայացնում է գրավոր ծանուցում: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ստուգումը կամ ուսումնասիրությունը կարող է սկսել գրավոր ծանուցումը ներկայացնելուց ոչ շուտ քան մեկ աշխատանքային օր հետո և ոչ ուշ, քան տասը աշխատանքային օր հետո: Ստուգումը կամ ուսումնասիրությունը չի կարող տասը աշխատանքային օրից ավել տևել (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ): Ստուգման և (կամ) ուսումնասիրության արդյունքներով կազմվում է համապատասխան եզրակացություն, որի մեկ օրինակը տրվում է ԳՈՐԾԱԿԱԼԻՆ:

2.4.3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ իրավունք ունի ԳՈՐԾԱԿԱԼԻՑ գրավոր պահանջել Պայմանագրի շրջանակներում ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից իրականացվող գործառույթներին վերաբերող տեղեկատվության, փաստաթղթերի կամ դրանց պատճենների տրամադրում,

2.5 **ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ պարտավոր է՝**

2.5.1 Սահմանված կարգով ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ապահովել ապահովագրության յուրանքաչյուր դասի վկայագրերով, ԳՈՐԾԱԿԱԼԻՑ ընդունել միջնորդային գործունեության շրջանակներում կնքված գործարքների ամբողջ ծավալը, իսկ դրանցում թերություններ հայտնաբերվելու դեպքում, անմիջապես տեղյակ պահել ԳՈՐԾԱԿԱԼԻՆ,

2.5.2 ԳՈՐԾԱԿԱԼԻՆ ներկայացնել սահմանված ձևին համապատասխանող և օրենսդրության պահանջների պահպանմամբ ապահովագրության վկայագրեր:

2.5.3 Գործակալին վճարել միջնորդավճար, որի չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ յուրաքանչյուր ապահովագրության դասի գծով սահմանվում է Պայմանագրի համապատասխան հավելվածներով և (կամ) փոխադարձ հաշվարկների ակտում:

2.5.4 Պայմանագրի 4.4 կետով սահմանված տեղեկատվությունը և վկայագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել համապատասխան վկայագրի թողարկումը և Ապահովագրողի կողմից կնքումը.

2.6 Կողմերը օրենքով և Պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

2.7 ԳՈՐԾԱԿԱԼԸ պարտավորվում է Պայմանագրով ստանձնած գործառույթներն իրականացնել բարեխղճորեն՝ ի շահ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ, այնպես ինչպես կգործեր իր անունից և ի շահ իրեն:

2.8 Պայմանագրով ստանձնած գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում ԳՈՐԾԱԿԱԼԸ՝ յուրանքաչյուր խախտման դեպքի համար, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ՝ վերջինիս պահանջի դեպքում, վճարում է տուգանք 10 000 (տաս հազար) ՀՀ դրամի չափով:

Տուգանքի վճարումը Գործակալին չի ազատում Պայմանագրով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ նկատմամբ ստանձնած պարտավորությունը չկատարելու հետևանքով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պատճառված վնասը՝ տուգանքի չծածկված մասով, գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցելու պարտականությունից:

2.9 ԳՈՐԾԱԿԱԼԸ ամբողջ ծավալով պատասխանատու է Պայմանագրի իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած ապահովագրական գաղտնիքը օրենքի և Պայմանագրի խախտմամբ հրապարակելու համար և կրում է նման հրապարակման արդյունքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ համար առաջացած անբարենպաստ հետևանքների ռիսկը:

2.10 Պայմանագրի ուժով ԳՈՐԾԱԿԱԼԸ անվերապահորեն և անհետկանչելի կերպով տալիս է իր համաձայնությունը ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ, վերջինիս առդիտն իրականացնող անձի և (կամ) Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից վերահսկողության, ստուգումների, վերստուգումների ուսումնասիրությունների իրականացմանը և դրանց հետ կապված վերջիններիս տեղեկությունների տրամադրմանը:

2.11 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքների դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

2.12 Անհաղթահարելի ուժի ազդեցության ի հայտ գալու, ինչպես նաև դրա ազդեցության վերանալու դեպքում Կողմերը պարտավոր են ողջամիտ ժամկետում տեղեկացնել միմյանց, նշելով նաև իրենց պարտավորությունների կատարման ժամկետները:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1 ԳՈՐԾԱԿԱԼՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ անունից Պայմանագրի 1.2 կետի 1.2.3 ենթակետում նշված գործառույթներն իրականացնում է առավելագույնը 10 000 000 (տաս միլիոն) ՀՀ դրամ ապահովագրական գումարների սահմանաչափերով կնքվող պայմանագրերի գծով (բացառությամբ Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության վկայագրերի, որոնց համար ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից կնքվող վկայագերում առավելագույն ապահովագրական գումարի չափը սահմանվում է ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության «ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ» RL 1-001-ով և աջակցության ապահովագրության վկայագրերի, որոնց համար ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից կնքվող վկայագերում առավելագույն ապահովագրական գումարի չափը սահմանվում է 50 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը (որը տվյալ ապահովագրության տեսակի գծով ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից կնքվող առավելագույն չափն է)):

3.2 Պայմանագրի 3.1 կետով սահմանված սահմանաչափերից բարձր ապահովագրական գումարներով ապահովագրության պայմանագրերը ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից կնքվում են բացառապես ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ գլխավոր տնօրենի (գլխավոր տնօրենին փոխարինող անձի) գրավոր համաձայնությամբ (թույլտվությամբ) կամ ստորագրվում են գլխավոր տնօրենի (գլխավոր տնօրենին փոխարինող անձի) կողմից:

3.3 ՎԿԱՅԱԳՐԵՐԸ ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից լրացվելուց, տպվելուց և հաճախորդի և իր կողմից ստորագրվելուց հետո առանձին պահոցում պահվում են ԳՈՐԾԱԿԱԼԻ մոտ: ՎԿԱՅԱԳՐԵՐԸ կնքվում են երկու, իսկ հաճախորդի ցանկությամբ, ինչպես նաև ՎԿԱՅԱԳՐՈՎ Ապահովադրից տարբերվող Շահառու նախատեսված լինելու դեպքում՝ երեք միանման օրինակից, որոնցից մեկ օրինակը՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ օրինակը մնում է ԳՈՐԾԱԿԱԼԻ:

3.4 ՎԿԱՅԱԳՐԵՐԻ կնքման գործընթացը ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից իրականացվում է «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ-ի գործակալների կողմից կամավոր ապահովագրության վկայագրերի կնքման ընթացակարգի դրույթներին համապատասխան, որը կցվում է Պայմանագրին:

3.5 ՎԿԱՅԱԳՐԵՐԸ ԳՈՐԾԱԿԱԼԻ (պատասխանատու աշխատակիցների) կողմից հաճախորդներին տրամադրվում են միայն ՎԿԱՅԱԳՐԵՐՈՎ սահմանված ապահովագրավճարները միանվագ ԳՈՐԾԱԿԱԼԻ հաշվարկային հաշվին մուտքագրվելուց կամ ԳՈՐԾԱԿԱԼԻՆ կանխիկ կերպով վճարելուց հետո: Ապահովագրավճարի տարաժամկետում թույլատրվում է միայն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ գլխավոր տնօրենի (գլխավոր տնօրենի լիազորված անձի կամ գլխավոր տնօրենի պարտականություններն իրականացնող անձի) գրավոր համաձայնությամբ:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

4.1. Պայմանագրի 1.2.3 կետով սահմանված ապահովագրության պայմանագրի (վկայագրի) կնքում կարող է իրականացվել ինչպես ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ, այնպես էլ ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից՝ ՀՀ օրենսդրության, Պայմանագրի և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից սահմանված և ԳՈՐԾԱԿԱԼԻՆ տրամադրված համապատասխան ներքին իրավական ակտերի համաձայն:

4.2. Ապահովագրության պայմանագրի կնքումը ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից՝

4.2.1. Գործակալի կողմից ապահովագրության պայմանագրի (վկայագրի) կնքում է համարվում Պայմանագրի 5.1.1 կետով սահմանված Վկայագրի վավերապայմանների համաձայն Գործակալի կողմից պատշաճ լրացումը և Գործակալի պատասխանատու անձի կողմից ստորագրումը:

4.2.2. Յուրաքանչյուր ապահովադրի հետ պայմանագիր կնքելիս պետք է կնքվեն երկու օրինակից, իսկ եթե ապահովագրության պայմանագրում նշված է Ապահովադրից տարբեր Շահառու, ապա 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, ընդ որում առաջին օրինակը տրվում է Ապահովադրին, երկրորդը՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, իսկ երրորդ՝ Շահառուին:

4.2.3. ԳՈՐԾԱԿԱԼՆ ի լրումն Պայմանագրի 4.2.2 կետով սահմանված Վկայագրի, Ապահովադրին է տրամադրում Ապահովագրողի կողմից տրված և թողարկված համապատասխան ապահովագրության խմբի դասի պայմանները, որոնք նույնպես պետք է կնքված և ստորագրված լինեն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից կամ կարված լինեն Ապահովադրի հետ կնքված Վկայագրի Ապահովադրի օրինակի հետ որպես մեկ միասնական փաստաթուղթ:

4.3. Ապահովագրության պայմանագրի կնքումն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից՝

4.3.1. Ապահովագրության պայմանագրի՝ Ապահովագրողի կողմից կնքում է համարվում այն գործընթացը, երբ ԳՈՐԾԱԿԱԼՆ իրականացրել է Պայմանագրի 1.2 կետով սահմանված գործողությունները, սակայն չի իրականացրել 4.2.1 սահմանված գործողությունը:

4.4. Ապահովագրության պայմանագրի ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից կնքման համար Գործակալը պետք է ապահովագրության պայմանագրի թողարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրի Ապահովագրողին՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ էլեկտրոնային փոստին, ֆաքսին կամ Ապահովադրի՝ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ գրասենյակ այցելության ապահովման միջոցով:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ապահովագրավճարների հաշվառումը՝

5.1.1. ԳՈՐԾԱԿԱԼԸ պարտավոր է իրականացնել ակտիվների առանձնացված հաշվառում՝ Ապահովադրի կողմից վճարված և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ պատկանող ապահովագրավճարները պահել որևէ առևտրային բանկում բացված առանձնացված հաշվարկային հաշվին:

5.1.2. ԳՈՐԾԱԿԱԼՆ իրավունք չունի օգտագործել Պայմանագրի 5.1.1. կետով սահմանված միջոցներն իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության համար և կարող է տնօրինել դրանք, բացառապես Ապահովադրին վճարելու նպատակով:

5.1.3. Պայմանագրի 1.2 կետով սահմանված ապահովագրության դասերի գծով կնքվող ՎԿԱՅԱԳՐԵՐԻ համար ապահովագրական սակագները, ապահովագրական ռիսկերը և պատահարները, յուրաքանչյուր սահմանված դեպքի համար ԳՈՐԾԱԿԱԼԻ միջնորդավճարների չափերը սահմանված են Պայմանագրին կից Հավելված 1-ում:

5.1.4. ԳՈՐԾԱԿԱԼԻՆ միջնորդավճարի վճարումը կատարվում է առնվազն ամիսը մեկ անգամ՝ նախորդ ամսվա ընթացքում ԳՈՐԾԱԿԱԼԻ միջոցով կնքված ՎԿԱՅԱԳՐԵՐԻ վերաբերյալ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ կողմից կազմված ամսական հաշվետվություններում արտացոլված տվյալների հիման վերակնքված փոխադարձ հաշվարկների ակտի ստորագրման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.1.5. Կողմերի միջև բոլոր հաշվարկները, ինչպես նաև վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5.1.6. Պայմանագրի 4.2 կետի համաձայն ԳՈՐԾԱԿԱԼԻ կողմից կնքված ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) գծով հավաքագրված և վերջինիս մոտ մնացող ապահովագրավճարների թույլատրելի առավելագույն չափը սահմանվում է ըստ յուրաքանչյուր գործակալի՝ համաձայն Ընկերության համապատասխան ներքին ընթացակարգի:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Ապահովագրական ռիսկերը և պատահարները ՎԿԱՅԱԳՐԵՐՈՒՄ սահմանվում են միայն ապահովագրության պայմաններում (կանոններում) նկարագրված և ներառված ապահովագրական ռիսկերի և պատահարների շրջանակներում՝ առանց նոր ավելացումների: ԳՈՐԾԱԿԱԼԸ իրավունք չունի ՎԿԱՅԱԳՐՈՒՄ սահմանել այսպիսի ռիսկ կամ ապահովագրական պատահար կամ գործողություններ, որոնք թեև նշված չեն ապահովագրության պայմաններում, սակայն ապահովագրության պայմաններում (կանոններում) նշված են, որ դրանք կարող են նախատեսված լինել ՎԿԱՅԱԳՐՈՒՄ:

6.2 ԳՈՐԾԱԿԱԼՆ ապահովագրական ռիսկերի կամ պատահարների խումբը կամ ամբողջությունը կարող է նշել միայն ապահովագրական սակագնի չափին համապատասխան և միայն այն ձևով, որոնք նշված են սույն ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ կից Հավելված 1-ով սահմանված աղյուսակների սակագներին համապատասխան ներկայացված ռիսկերի և պատահարների խմբով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ վեճերի լուծումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դատարանի միջոցով:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկի գործակալների ռեգիստրում որպես ապահովագրական գործակալ հաշվառվելու պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագիրը կարող է լուծվել փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով կամ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին առնվազն 15 օրացուցային օր առաջ ծանուցելով մյուս կողմին:

8.2 Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները, վավեր կլինեն այն դեպքում, եթե դրանք կատարվել են գրավոր ձևով և ստորագրված են կողմերի կողմից լիազորված անձանց կողմից:

8.3 Պայմանագրի ներքո նամակագրությունը կարող է իրականացվել Կողմերի էլեկտրոնային հասցեներով, ֆաքսով կամ փոստային հասցեով փաստաթղթերի առաքմամբ, բացառությամբ Ապահովագրության պայմանագրերի, որոնք պետք է հանձնվեն հասցեատիրոջը կամ պատվիրված նամակով կամ առձեռն:

8.4 Պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները, հավելվածները կցվում են Պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

8.5 Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.6 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրանքաչյուր կողմին մեկական օրինակից:

9. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏՎՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՄՊԸ	ԳՈՐԾԱԿԱԼ «ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՄՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք ՀՀ ԿԲ գրանցման համար Թիվ 4 Ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա՝ ԱՊՈ 0002 (0043) Հ/հ՝ 247010050745 «Արդշինբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ՝ 02574465 Հեռախոս՝ +374 11 56 04 04	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան Առինջ 2 մկրշ. Շ. 1/13 /17 Գրանցման համար՝ 264.110.1318978 Գրանցման տար.՝ 22.05.2023թ. ՀՎՀՀ՝ 08256045 Հեռ. +374 93 003 997 Էլ փոստ՝ arevikmkhitaryan@yahoo.com
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ԴԱՂՈՒՆՑ	ՏՆՕՐԵՆ ԱՐԵՎԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ
----------	----------
Կ. Տ. ստորագրություն	ստորագրություն Կ.Տ.
Digitally signed by DAGHUNTS ARMAN 2414780096 Date: 2023.11.09 16:34:07	MKHITARYAN AREVIK 6110870382 Digitally signed by MKHITARYAN AREVIK 6110870382 Date: 2024.03.25 09:47:57 +04'00'

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ	ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ	ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ	ՍԱԿԱԳԻՆ (տարեկան)	ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ ՉԱՓ (% ապահովագրավճարի նկատմամբ)
Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	Որպես տաքսի, երթուղային տաքսի կամ հանրային տրանսպորտ օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների համար ԱՊՊԱ պայմանագիր կնքվում է միայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ գլխամասային գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 16, 1/1 տարածք հասցեում	Չի կիրառվում	Սահմանվում է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ RL 1-001 ԿԱՆՈՆՆԵՐՈՎ (ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ)	Սույն պայմանագրով իրականացված գործակալության դիմաց Ապահովագրողը Գործակալին վճարում է միջնորդավճար՝ Գործակալի կողմից կնքված յուրաքանչյուր Ապահովագրության պայմանագրի/վկայագրի համար, որոնց չափերը, հաշվարկման/որոշման կարգը սահմանում է Ապահովագրողը՝ միջնորդավճարների չափերը, հաշվարկման/որոշման կարգն իր էլեկտրոնային փոստի հասցեից Գործակալի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:
Ցամաքային ավտոտրանսպորտի ապահովագրություն	Պայմանագրում նշվում է մինչև 3 վարորդ չի օգտագործվում որպես տաքսի	Ապահովագրական գումարի 1 %, բայց ոչ պակաս 50 000 ՀՀ դրամից	Համաձայնեցվում է Գործակալական ցանցի և վաճառքների վարչության պետի հետ	Մինչև 20 %
	Անսահմանափակ թվով վարորդներ չի օգտագործվում որպես տաքսի	Ապահովագրական գումարի 1,5 %, բայց ոչ պակաս 80 000 ՀՀ դրամից		
Գույքի ապահովագրություն		Ապահովագրական գումարի 1 %, բայց ոչ պակաս 90 000 ՀՀ դրամից, երկրաշարժի դեպքում՝ 2 %	0,23%	Մինչև 15%
Դժբախտ պատահարներից ապահովագրություն		Չի կիրառվում	0,2%	Մինչև 15%
Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	Պայմանագրում նշվում է մինչև 3 վարորդ (անսահմանափակ վարորդների հնարավորություն նախատեսված չէ) <u>Չի օգտագործվում որպես տաքսի</u>	Չի կիրառվում	1%	Մինչև 15%
	Պայմանագրում նշվում է մինչև 3 վարորդ (անսահմանափակ վարորդների հնարավորություն նախատեսված չէ) <u>Օգտագործվում է որպես տաքսի</u>		1,3%	

Աջակցության ապահովագրության սակագներ և պայմաններ
(Միջնորդավճարն ապահովագրավճարների մինչև 45 %-ի չափով)

ՀՀ դրամ յուրաքանչյուր օրվա համար

	Զոնա 1			Զոնա 2			Զոնա 3		
Օր	15000$	25000$	50000$ 30000€	15000$	25000$	50000$ 30000€	15000$	25000$	50000$ 30000€
3- 15	220	260	310	240	280	330	300	330	370
16-30	200	240	300	220	260	310	280	310	330
31-60	190	220	280	200	240	300	260	300	310
61-90	170	200	260	190	220	280	240	280	300
91-365	130	150	220	150	200	260	200	260	280

Զոնա 1	Զոնա 2	Զոնա 3
Եվրոպա՝ **Շենգենյան երկրներ՝** Ավստրիա, Բելգիա, Հունգարիա, Հունաստան, Դանիա, Իսլանդիա, Իսպանիա, Իտալիա, Մալթա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Լյուքսեմբուրգ, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Չեխիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվիա, Շվեդիա և Շվեյցարիա **Այլ եվրոպական երկրներ՝** Ալբանիա, Բուլղարիա, Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Կիպրոս, Լիխտեյնշտեյն, Մակեդոնիա, Մոնակո, Ռումինիա, Խորվաթիա, Սերբիա և Չեռնոգորիա **Աֆրիկա՝** Եգիպտոս, Մարոկո, Թունիս **Մերձավոր Արևելք՝** Հորդանան, Լիբանան, Սիրիա, Թուրքիա, Բահրեյն, Իրան, Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Եմենի Արաբական Հանրապետություն, Քուվեյթ, Օման, Միացյալ Արաբական Էմիրություններ, Սաուդյան Արաբիա	Ռուսաստանի Դաշնություն	Աշխարհ

Աջակցության ապահովագրության հատուկ պայմաններ՝

- Հատուկ առաջարկ՝ ապահովագրությունը գործում է մեկ տարվա ընթացքում, սակայն արտերկրում գտնվելու օրերի քանակն այդ նույն մեկ տարվա ընթացքում նույն ապահովագրական վկայագրով չպետք է գերազանցի 90 օրը: Ապահովագրական այս ծառայության արժեքն է 12 000 ՀՀ դրամ:
- Հատուկ առաջարկ՝ ապահովագրությունը գործում է մեկ տարվա ընթացքում, սակայն արտերկրում գտնվելու օրերի քանակն այդ նույն մեկ տարվա ընթացքում նույն ապահովագրական վկայագրով չպետք է գերազանցի 30 օրը: Ապահովագրական այս ծառայության արժեքն է 6 600 ՀՀ դրամ:

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ԱՐՄԱՆ ԴԱՂՈՒՆՑ

Digitally signed by DAGHUNTS ARMAN 2414780096

Ստորագրություն Կ. Տ.

«ԲՈՆՈՒՍ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԱՐԵՎԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ

MKHITARYAN AREVIK 6110870382

Digitally signed by MKHITARYAN AREVIK 6110870382
Date: 2024.03.22 15:19:10 +04'00'

ստորագրություն Կ. Տ.